Ambassador
Republic of Armenia

14 մայիսի, 2014թ., Կոպենհագեն

Հարգելի պարոն Ղահրամանյան,

Թեև Դանիայում և Նորվեգիայում ՀՀ դեսպանությունը բազմիցս արդեն առիթ ունեցավ Ձեզ անձամբ հայտնելու մեր գոհունակությունը և հավաստել անկեղծ մեր երախտագիտությունը, մեկ անգամ ևս ցանկանում ենք Ձեզ հղել շնորհակալական մեր խոսքերը և հիացմունքն այն գործի համար, որ Դուք, որպես հայրենասեր, հանձն առաք կատարել:

Հայ-դանիական կապերի իրական շարժիչ ուժը հենց այսօրինակ նախաձեռնություններ են, և մենք կարևոր ենք համարում հարգանքի տուրքի մատուցումը այն մարդկանց, որոնք իրենց անվերապահորեն և անշահախնդիր նվիրվել են մեր ազգի զավակների փրկությանը:

Խաչքարի տեղադրումը Կարեն Յեփփեի հուշաքարի մոտ Գյուլինգում շատ մեծ իրադարձություն էր բոլորիս համար: Վստահ ենք՝ այն նոր խթան կհանդիսանա և՛ հայ-դանիական հարաբերությունների խորացման համար, և՛ մեզ ավելի ամուր կկապի մեր անցյալի հետ, որով էլ կկառուցենք մեր ներկան և ապագան՝ ի նպաստ յուրաքանչյուր հայորդու:

Ուրախ ենք, որ ունենք Ձեզ նման վստահելի և պատրաստակամ գործընկեր և շնորհակալ ենք արդյունավետ համագործակցության համար:

Ընդունեք հարգանքիս խորին հավաստիքը:

Հրաչյա Աղաջանյան

Դանիայում և Նորվեգիայում ՀՀ Դեսպան